# 83 Ես կլսեմ ձայնդ, Հիսո՛ւս,

1. Ես կլսեմ ձայնդ, Հիսո՛ւս,
Անոր համար կուգամ,
Սիրուն Քու ձայնդ ականջս լեցուց,
Ինչպե՜ս ես չարտորամ:

Կուգամ (2), զիս մի՛ մերժեր,
Հույժ կ՚աղաչեմ, ո՛վ Տէր.
Արժանացուր հոգնած հոգիս
Սուրբ հանգստյան երկնից:

2. Հոգիս կյանքես է ձանձրացած
Այս չոր ձորին եզերքն,
Սիրտս ներսիդիս է խռոված՝
Մեղքիս ճնշող բեռեն:

3. Ունայն տեղ ես շատ ջանք ըրի
Փրկել զիս իմ ուժովս,
Հանցանքս սրբել ես չկրցի
Բարեգործությունովս:

4. Քու սուրբ Արյունդ թափվեցավ
Խաչափայտին վրա,
Բոլոր իմ մեղքս հոն քավվեցավ՝
Քու սուրբ խաչիդ վրա:

5. Ո՜րչափ սուրբեր արդեն եկան
Քու տեսությունդ վայլել,
Դուն ես ճամփան, որով կրցան
Այն սուրբ հանգիստն մտնել: